

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԵՎ ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ*

Անուշավան Զաքարյան

Բանասիրական գիտությունների դոկտոր
Պատմաբանասիրական հանդես, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ
ՀՀ, Երևան, Մ. Բաղդասյան 24/4

Էլ. հասցե՝ patmhandes@rambler.ru

Հոդվածը ներկայացվել է 14.01.2023, գրախոսվել է 18.01.2023, ընդունվել է տպագրության 11.04.2023
DOI: 10.53548/0320-8117-2023.1-106

Ներածություն

Ավետիք Իսահակյանի և XX դ. առաջին երեսնամյակի հայ իրականության երևելի դեմքերից՝ հասարակական-քաղաքական գործիչ, հայագետ Դավիթ Անանունի առնչությունների մասին մինչև վերջերս հայտնի էր, որ նրանք ծանոթ են եղել դարասկզբին: Այդ մասին Դ. Անանունը Բաքվի 26 կոմիսարներին նվիրված «Բաքվի շիրիմները» վերնագրով հոդվածաշարում գրում է. «Մեր ֆիրման (Թումանյան եղբայրների նախաձեռնության, որտեղ ծառայում էր – Ա. Զ.) հեղափոխական կենտրոնի հոչակ ուներ: Մի խումբ ծառայողներս գրչի ու գրքի սիրահարներ էինք: Կարդում էինք, վիճում, թարգմանում, թղթակցություններ գրում թերթերին, գրքեր տարածում ... Մեզ հետ ծառայում էին մտավորականներ, որոնք մասնակցել էին Խանասորա արշավանքին: Մեզ հյուր էին գալիս հայ գրողներ (Ավ. Իսահակյան, Դեր. Դեմիրճյան և այլն) ...»¹:

Երկու մեծերի հետագա առնչությունների հետ կապված մեր պրպտումները տարիներ ի վեր ապարդյուն էին: Սակայն վերջերս լույս է տեսել Ավետիք Իսահակյանի «Երկերի լիակատար ժողովածու»-ի ծավալուն XIV հատորը (Երևան, 2021, 1136 էջ), որում ընդգրկված են Վարպետի գրած նամակները, որոնք նոր լույս են սփռում խնդրո առարկա հարցում: Ժողովածուում ընդգրկված նամակները բազմաթիվ կարևոր հարցեր են պարզում, որոնք առնչություն ունեն Ավ. Իսահակյանի անձի, կյանքի, գործունեության, շրջապատի, մտերիմ ընկերների հետ ունեցած հարաբերությունների, հասարակական-քաղաքական, գրական-մշակութային բնույթի խնդիրների մասին: Բանաստեղծը բովանդակալից նամակներ է գրել անվանի գրողներից, գիտնականներից, հասարակական-քաղաքական, մշակութային գործիչներից շատ շատերին: Այդ շարքում ուրույն տեղ ունեն Դավիթ Անանունին գրածները:

* Հոդվածը որպես զեկուցում ընթերցվել է ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվ. գրականության ինստիտուտում 2022 թ. ապրիլի 26–27-ին տեղի ունեցած Վ. Կիրակոսյանի մահվան տարելիցին և հիշատակի ոգեկոչմանը նվիրված հանրապետական գիտաժողովում:

¹ «Մշակ» (Թիֆլիս), 23.III.1919:

Ավ. Իսահակյանի նամակները Հայաստան վերադառնալու հարցով

Հայտնի իրողություն է, որ Դ. Անանունն ողջ գործունեության ընթացքում առանձնահատուկ տեղ է հատկացրել Հայաստանում հայահավաքմանը: Հայտնի է նաև, որ խորհրդային իշխանության առաջին տարիներին հանրապետության ղեկավարները մեծ ջանք էին գործադրում այդ գաղափարը կյանքի կոչելու համար: Հայրենիք վերադառնալու կոչով շատերի թվում նրանք դիմում են նաև արտերկրում գտնվող Ավետիք Իսահակյանին: «Ինձ համար ճանապարհը միշտ բաց է, – 1925 թ. նոյեմբերի 17-ին Վենետիկից ՀՅԴ հայտնի գործիչ, Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» ամսագրի խմբագիր Ռուբեն Դարբինյանին գրում է Իսահակյանը: – Ամեն տարի պատռոնապես դիմում անում են: Ես քաշ եմ տալիս միշտ: Մանավանդ Մյասնիկյանը շատ էր ուզում, որ գնայի: Այդ խումբը (խոսքը Պ. Մակինցյանի, Ա. Մյասնիկյանի, Դ. Անանունի, Յ. Խանզադյանի մասին է – Ա. Զ.) միշտ բարեկամ – ընկերներ մնացին ինձ, սկսած 1903 թվից»²:

Այստեղ հարկ ենք համարում հատուկ նշել, որ այդ տարիներին Հայաստանի ոչ բոլոր ղեկավարներն էին նման նպատակ հետապնդում: Այսպես, Ստ. Շահումյանի գլխավորած Բաքվի կոմունայի արդարադատության կոմիսար, 1921 թ.՝ ՀԽՍՀ արդարադատության ժողկոմ, 1923-1924 թթ.՝ ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահի տեղակալ, 1924-1928 թթ.՝ նախագահ, գրականագետ, պատմաբան, հետագայում ակադեմիկոս Արտաշես Կարինյանը 1926 թ. գրում էր. «... Պետք է վերջ տալ հայության Հայաստանում հավաքման գաղափարին, մի գաղափարի, որ մինչև այժմ էլ ապրում է ժողովրդական զանգվածների գիտակցության մեջ: Հողային ֆոնդի բացակայությունն է պատճառը, որ զարգանա ազգայնական ռոմանտիկան, և հայությունը ձգտի տիրանալու իր «պապենական հողերին», ինչպես նաև վառ ու կենդանի պահի «միացյալ ու անկախ Հայաստանի գաղափարը»: Ուստի ... անհրաժեշտ է նախ՝ ա) վերջ դնել հայության հավաքման գաղափարին Հայաստանի մեջ և ապա՝ բ) երկրի մեջ եղած 300.000 արևմտահայ գաղթականությանը ցրել լայնածավալ Ռուսաստանի մեջ»³ և այլն, և այլն:

Ինչևէ. Հայաստան վերադառնալու հարցում Ավ. Իսահակյանն այլոց շարքում քանիցս խորհուրդ է հարցրել նաև Դ. Անանունից: Այդ մասին Իսահակյանի նամակներում կան մի շարք խոսույն վկայություններ. դրանցից առաջինը Դ. Անանունին գրած նրա <1925, 1-12 դեկտեմբերի, Վենետիկ> թվակիր՝ անչափ հետաքրքրական ու բովանդակալից ընդարձակ նամակի հետևյալ տողերն են. «Բյուրեղացած սրտից բխած թանկագին նամակդ ամենաքաղցր ձայներ զարթնեցրեց հոգուս մեջ. – մեր անհետացած, կորած ժողովրդի ձայնն էր, կորած ընկերների ձայնն էր, մանկության ժամանակի գեղի ժամի զանգի ձայնն էր և բոլոր անուշ ձայները մեր լեռների աղբյուրների

² Իսահակյան 2021, 121:

³ «Դրոշակ» (Երևան), թիվ 8, օգոստոս, 2021, շաբաթիկի էջ 3, Անկախ հայկական պետականությունը և հայ բոլշևիկները 2021, շաբաթիկի էջ 4:

բյուրեղյա: Արցունքով կարդացի ամեն տողը, և արցունքով գրում եմ այս տողերը: ... Քո նամակը՝ բարձր նմուշ զգացմունքի, ազնիվ մտքի ու ոճի, եղավ ինձ համար՝ Անուշ բանտի մեջ մոռացված Արշակին իր թագավոր լինելը հիշեցնող Դրաստամատը: Ես օտարել էի ինձ, ես մոռացել էի ինձ, ես ոչինչ էի դարձել՝ ջարդված, հուսահատ հայ ժողովրդի զարհուրելի բախտից, գազազած ու դառնացած, *դու վերադարձրիր ինձ իմ թագը*. դու ասում ես թե՛ հայ ժողովուրդ կա՝ իր սուրբ լեզվով ու հողով, որ հիշում է ինձ. ընկերներ կան, ուզում են ինձ. տեղ կա ինձ համար ժողովրդի և ընկերների սրտի մեջ – աղամանդյա գահ:



*Դո՛ւ եղար իմ բախտի դարբնոցը, ոչ թե ես: Հավիտյան պիտի սիրեմ քեզ, ավելի, շար ավելի, որքան մեջս զգամ ուժերս. սիրում եմ քեզ իբրև ազնվության մի կայուն սյուն, կանգուն մնացած պղպող հեղեղների առաջ, իսկ հիմա – իմ վերածնողին ... (ընդգծումները մերն են – Ա. Զ.)*⁴:

Իսկ ահա Կահիրեում լույս տեսնող ՀՅԴ-ի օրգան «Հուսաբեր» օրաթերթի խմբագիր, դաշնակցական հայտնի գործիչ Վահան Նավասարդյանին հասցեագրած «1925, 12 դեկտեմբերի, Վենետիկ» թվակիր նամակում բանաստեղծը հայտնում է. «... ամբողջ հոգով ձգտում եմ Հայաստան: Նա միայն կարող է ինձ կենդանացնել, ժողովրդի հետ, նրա մեծ շնչով շնչել: 15 տարի եղավ, որ պանդուխտ եմ. 15 դար ... բավական է: Դ. Անանունին գրեցի, խորհուրդ հարցրի գնալու մասին, գրում է «Ե՛կ, Ե՛կ, քեզ ինչ, թե ով է իշխում, դու քո գահն ունես ժողովրդի ու մեր սրտում»⁵: «<1926>, 26 հունվարի, Վենետիկ» թվակիր նամակում էլ նույն հասցեատիրոջը գրում է. «Գրել էի Դավիթ Անանունին, խորհուրդ էի հարցրել վերադարձիս մասին. գրում է – Ե՛կ, Ե՛կ, Ե՛կ: Քեզ պես մարդոց պետք ունենք, մի՛ վախեցիր, քանակը որակ է դառնում, երբ շատանանք, սոցիալիզմն ու Սիոնը իրար կգողենք»⁶:

⁴ Իսահակյան 2021, 124-125:

⁵ Իսահակյան 2021, 129:

⁶ Իսահակյան 2021, 139:

Իսկ արդեն անձամբ Դ. Անանունին <1926, 15 հունվարի, Վենետիկ> թվակիր նամակում Ավ. Իսահակյանը գրում է. «Ես շա՛տ կիսնդրերի քեզ, միայն մի երկու բառ գրես ինձ *(ես շար եմ հավաքում քեզ)* սիրելի Դավիթ՝ արի կամ մնա (ընդգծումը մերն է – Ա. Զ.)»⁷:

Ռ. Դարբինյանին ուղղված «<1926, հուլիս>, Վենետիկ» թվակիր նամակում էլ Իսահակյանը հայտնում է. «Ես խորհուրդ էի հարցրել (Հայաստան վերադառնալու խնդրով – Ա. Զ.) Դ. Անանունից. գրում է, որ վերադառնամ»⁸:

Նկատենք, որ 1926 թ. հոկտեմբերին՝ հայրենիք գալուց, Երևանում ապրելիս Ավ. Իսահակյանը մշտապես շփվել է Դ. Անանունի հետ: Դրա վկայությունը դարձյալ Վ. Նավասարդյանին ուղղված՝ «1930, 11 օգոստոսի, Փարիզ» տարեթվով նամակի հետևյալ տողերն են. «Քանի դեռ Դավիթ Անանունը աքսորված չէր, երկու անգամ եղել ենք մայրիկիդ մոտ, ճաշել ենք (քյուֆթա ենք կերել), քո կենացը խմել»⁹:

1925-1927 թթ. Դ. Անանունը Երևանում շփվել է քաղաքական-պետական գործիչ, ճարտարապետ, ՀՅԴ նշանավոր անդամ, Հայաստանի առաջին Հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունու հետ: Նա, հույսերով լեցուն, արտասահմանից խորհրդային երկիր էր վերադարձել 1924 թ. վերջերին (որոշ ժամանակ եղել է Թիֆլիսում), իսկ 1925 թ. սկզբից ապրում և աշխատում էր Երևանում: Ահա թե ինչ է գրում Հովհ. Քաջազնունու որդին՝ լենինյան կոմերիտական Կարեն Քաջազնունին, 1937 թ.՝ հոր ձերբակալությունից հետո (Քաջազնունին գնդակահարվել է 1938 թ. Երևանի բանտում), Հայաստանի պետանվտանգության ղեկավարին. «Մի անգամ (այս տարվա գարնանը) (խոսքը 1927 թ. մասին է – Ա. Զ.) Իսահակյանի հետ եկավ Դավիթ Անանունը: Վերջինիս հետ Քաջազնունին ամեն օր հանդիպում էր 1925 թ. գարնանը, երբ նրանք երկուսը (և մի շարք այլ անձինք) ճաշում էին Իսան-Աղովների մոտ: Անանունի մասին Քաջազնունին այսպես էր արտահայտվում. շատ թերություններ ունի, բայց ինձ նա դուր է գալիս, որովհետև *հայ մարդ է* (ընդգծումը մերն է – Ա. Զ.)»¹⁰:

Իսահակյանի առնչությունն Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901-1918)» գրքի տպագրությանը

Ավ. Իսահակյանի և Դ. Անանունի առնչությունների հետ կապված մեկ այլ հետաքրքիր իրողություն վերաբերում է վերջինիս «Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901-1918)» աշխատության երրորդ հատորի տպագրությանը: Պարզվում է, որ Ավ. Իսահակյանն արտասահմանում Սովետական Միության առևտրական (Տորգպրեդի) ներկայացուցիչ, կուսակցական-պետական գործիչ, գրաքննադատ, հրապարակագիր, թարգմանիչ Պողոս Մակինցյանի հետ դրանում մեծ դեր է ունեցել: Այսպես. դեռևս «<1924>, 14

⁷ Իսահակյան 2021, 136:

⁸ Իսահակյան 2021, 164:

⁹ Իսահակյան 2021, 287:

¹⁰ Հակոբյան 2020, 321:

հոկտեմբերի, Վենետիկ» թվակիր՝ Ռ. Դարբինյանին ուղղված նամակում Իսահակյանը գրում է. «Մի պարոն, որ վախենում է անունը տալ, խնդրում է քեզ հայտնել (ինքը Հայաստանից է եկել), որ Դավիթ Անանունը փող է խնդրում քեզնից, ինչ-որ գիրք է ուզում հրատարակել [խոսքը «Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901-1918)» գրքի մասին է – Ա. Զ.]: *Անանունը միակ մարդն է, որ ժայռի պես կանգնել է համադարձ ստրկամտության մեջ, քննադատում է, և վախենում են նրանից*: Հիմա դու գիտես, թե ի՞նչ կերպով փողը պիտի հասցնես Երևան, երևի Պարսկաստանի միջոցով (ընդգծումը մերն է – Ա. Զ.)»¹¹:

Դ. Անանունը նախապես ցանկացել է գիրքը հրատարակել Ամերիկայում¹², ապա, ինչ-ինչ նկատառումներով, նաև նկատի ունենալով Մխիթարյանների մոտ՝ Վենետիկում, տպագրության բարձր որակը որոշել է գիրքը տպագրել այդտեղ: «1925, 23 նոյեմբերի, Վենետիկ» թվակիր նամակում Ավ. Իսահակյանը Պ. Մակինցյանին գրում է. «Սիրելի Պողոս, /... Սպասում էի Դավիթի գրքի մասին վերջնական կարգադրության, սակայն ուրբաթն ավելի շուտ եկավ, քան շաբաթը:

Կարծում եմ, որ գիրքը չի տպվելու այստեղ, եթե ուզենաս էլ:

¹¹ Իսահակյան 2021, 62:

¹² Այդ մասին տեղեկանում ենք Դ. Անանունի՝ 1924 թ. օգոստոսի 21-ին ՀՅԴ գործիչ, մանկավարժ, հրապարակագիր, «Հայրենիք» (Բոստոն) օրաթերթի «Մեզմե մեկը» բաժնի երկարամյա վարիչ, «Ամերիկահայ հանրագիտակ տարեգրքի» հրատարակիչ Հակոբ Խաշմանյանին գրած նամակից. «Կամենում եմ մի խնդրի առիթով ինքս Ձեզ նեղություն պատճառել: Բանը ահա ինչն է. ես պատրաստ ունեմ իմ աշխատության («Ռուսահայերի հասարակական զարգացումը») երրորդ հատորը: Տպագրված այդ գործը կլինի 480 էջ (էջում 38 տող, տողում 50 տառ): Ձեռագիրս հանված է գրամեքենայով, ուրեմն ոլորներ չեն: Հարցնում եմ Ձեզ. կարո՞ղ է հրատարակիչ գտնվել Ամերիկայում իմ այդ գործի համար: Հարկավ՝ հրատարակիչը իր վրա է առնում բոլոր ծախքերը (թուղթ, տպագրություն) և վայելույց հոնորար է վճարում ինձ, հեղինակիս: Հաղորդում եմ Ձեզ նաև այն, որ աշխատությունս զբաղվում է ռուսահայ իրադարձություններով, նրանց լուսաբանությամբ և քննությամբ՝ նկատի ունենալով 1901-1918 տարիների ժամանակաշրջանը: Իմ գործի մեջ ես անաչառ եմ, թեև սա ենթակայական հասկացողություն է: Համենայն դեպս ինձ փրկում է իմ պատմահայեցողությունը – մարքսիզմը: Անաչառ լինելով՝ գործս խոստովանում է որոշ դեմքերի ու հոսանքների դրական ջանքերը, բայց և անխնա դատափետում նրանց պատմական խոշոր սխալները: Մասնավորապես քննության եմ առել և դատապարտության խոսք ասել Հայկական հարցի շուրջը տարված քաղաքականության, չեմ խնայել կամավորական շարժումը և բնականաբար Հ. Հ. Դաշնակցությանը: Այս հաղորդում եմ, որ պատրանքներ չստեղծվեն իմ գործի շուրջը և հրատարակիչը իմանա, թե ինչի հետ գործ ունի: Աշխատությանս աղբյուրների մի խոշոր մասը ռուսական է, ուրեմն և պահանջվում է այնպիսի տպարան, որ ռուսերեն քիչ տառեր ունենա *ծանոթությունների համար*: Բազմաթիվ թվական աղյուսակներ կան գործիս մեջ: Արևմտահայերը խորշում են թվերից, բայց մենք ձգտում ենք երևույթները պատկերացնել հաստատ տվյալներով: Ուրեմն հրատարակիչը պիտի նկատի ունենա և այս հանգամանքները – ռուսերենի և թվերի:

Բարի եղե՛ք որոնելու մի հրատարակիչ: Չեմ կարծում, որ նա վնասովի: Հավանորեն գիրքը մեզ, Հայաստանի բնակիչներին, չի հասնի, բայց միթե նվազ են գաղութների հայ ընթերցողները և կամ պակաս հետաքրքրություն ունեն նրանք դեպի մեր *երեկը*, որ սնուցանում է պատմական այսօրը: Իհարկե, իմ հրատարակչին ես չեմ արտոնում ոչինչ հապավելու կամ փոփոխելու իմ գործի մեջ: Այն պիտի լույս ընծայվի այնպես, ինչպես դուրս է եկել իմ գրչի տակից: Գրականությունը իմ աչքում սրբագործություն է: Հիջում այստեղ ես չգիտեմ» (<< գրականության և արվեստի թանգարան, Հ. Խաշմանյանի ֆ., N 334, թ. 3-4: Ինքնագիր: Նաև՝ Զաքարյան 2023, 240-241):

Տպարանի վարդապետը տեղափոխվում է Միլան, ուրիշն է նստելու նրա աթոռին, բայց սա երկրորդական է, անշուշտ: Ցավալին այն է, որ հայերեն շարող երկու գրաշարներից մեկը խենթացավ. հիվանդանոցումն է: Շարող չունեն: Պոլսից սպասում են գրաշարի, որ այս վեց ամիս է՝ պիտի գա, և դեռ պիտի գա: Իրանք էլ չեն իմանում, թե ե՞րբ պիտի գա:

Այդ դժվարությունից դուրս, հիմա առաջարկում են ինձ (երբ սկսեն գիրքը շարել), որ պայմանը կապենք իտալական> լիրեթի վրա, որովհետև ֆրանսիական> ֆրանկը ընկնում է, և, ըստ իրենց ակնարկին, 100-ին 50 տոկոս հավելումն պիտի անեն: Առհասարակ սրանց հետ գործ ունենալը – դժվարին բան է:

Նոր վարդապետը, որ ստանձնե գործերը, կխոսիմ հետը, եթե ուզենաս, որ տպվի, և եթե գրաշարն էլ գա ...»¹³:

Մեկ այլ նամակով էլ՝ «1926, 4 հունվարի, Վենետիկ», Ավ. Իսահակյանը Պ. Մակինցյանին հայտնում է. «Երկու օր առաջ տպարանի հետ վերջացրի պայմանը Դավիթի գրքի տպագրության վերաբերմամբ. նույն պայմանն է, նույն թղթով ու ձևով, ինչ որ քեզ հայտնել են նրանք, միայն ֆրանսիական ֆրանկը վերածեցինք դոլլարի հաշվով: Դոլլարը իբրև կայուն դրամ:

Կսկսվի տպագրությունը իսկույն, երբ համաձայն ես, երբ – նոր առաջարկ – կանխավճար ուղարկես 100 դոլլար: ... Եթե ուղարկելու ես դրամը, ուղարկի՛ր նրանց, վանքի վրա, իսկ եթե չես համաձայնում, գրի ինձ, որ ձեռագիրը ետ ստանամ»¹⁴:

Պարզվում է նաև, որ գրքի տպագրության հարցով Ավ. Իսահակյանն ու Դ. Անանունը ևս նամակագրական կապի մեջ են եղել: Այսպես, Ավ. Իսահակյանը <1926, 15 հունվարի, Վենետիկ> թվակիր նամակում Դ. Անանունին գրում է. «Մոտ մի ամիս առաջ քեզ նամակ գրեցի գրքիդ տպագրության համար, բայց մինչև օրս չեն ձեռն զարկած, և Պողոսից էլ (Մակինցյան – Ա. Զ.) կարգադրություն չկա սկսելու. ինչ-որ հրահանգի է սպասում: Լավ կլիներ, որ սկսած լիներ, քանի ես այստեղ եմ, որովհետև Հայաստան գալուց առաջ պիտի Փարիզ գնամ ...»¹⁵:

Ինչևէ, Դ. Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901-1918)» վերնագրով աշխատությունը 1926 թ. տպագրվում է Վենետիկում:

Հավելենք. Դ. Անանունի՝ աքսորում եղած ժամանակ՝ 1934 թ., Ավ. Իսահակյանը Մոսկվայում ապրող հայտնի մտավորական, գրող, թարգմանիչ Կարեն Միքայելյանից տեղեկություն է խնդրել նրա մասին¹⁶:

Եզրակացություններ

Այսպիսով՝ կարելի է արձանագրել. Ավ. Իսահակյանի՝ հայրենիք գալու առնչությամբ Դ. Անանունի որոշիչ դերը, նաև վերջինիս՝ «Ռուսահայերի

¹³ Իսահակյան 2021, 123-124:

¹⁴ Իսահակյան 2021, 133:

¹⁵ Իսահակյան 2021, 134:

¹⁶ Իսահակյան 2021, 344:

հասարակական զարգացումը (1901-1918)» գրքի հրատարակության հարցում Վարպետի գործուն մասնակցությունը:

Գրականություն

Անկախ հայկական պետականությունը և հայ բոլշևիկները: Նյութեր և փաստաթղթեր 2021, Աշխատասիրությամբ՝ Վլադիմիր Հարությունյանի, Երևան, հեղինակային հրատ., 874 էջ:

«Դրօշակ» (Երևան), թիվ 8, օգոստոս, 2021, շապիկի էջ 3:

Զաքարյան Ա. 2023, Դավիթ Անանուն. Նամակների ընտրանի, Պատմաբանասիրական հանդես, N 1, էջ 207-246:

Իսահակյան Ավ. 2021, Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հ. տասնչորսերորդ: Նամակներ (1924-1957), Երևան, «Էդիթ Պրինտ», 1136 էջ:

Հակոբյան Ա. 2020, ՀՀ Դաշնակցություն կուսակցությունը լուծարելու Հայկոմկուսի փորձերը. 1920-ական թվականներ, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 431 էջ:

ՀՀ գրականության և արվեստի թանգարան, Հ. Խաչմանյանի ֆ., N 334, թ. 3-4: Ինքնագիր: «Մշակ» (Թիֆլիս), 23.III.1919:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԵՎ ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Անուշավան Զաքարյան

Ամփոփում

Ավետիք Իսահակյանի և XX դ. առաջին երեսնամյակի հայ իրականության խոշորագույն դեմքերից՝ հասարակական-քաղաքական գործիչ, հայագետ Դավիթ Անանունի առնչությունների մասին մինչև վերջերս հայտնի էր, որ նրանք ծանոթացել են դարասկզբին Բաքվում: Դ. Անանունն այդ ժամանակ ծառայելիս է եղել Թումանյան եղբայրների նավթահանքերում, որտեղ հաճախակի հյուր են եղել մի շարք գրողներ, այդ թվում՝ Ավ. Իսահակյանը:

Ավ. Իսահակյանի՝ 2021 թ. հրատարակված «Երկերի լիակատար ժողովածու»-ի XIV հատորի նամակներից պարզվում է՝ ա) արտասահմանից Հայաստան գալու հարցում Ավ. Իսահակյանը շատերի թվում քանիցս խորհուրդ է հարցրել Դ. Անանունից, և վերջինս որոշիչ դեր է ունեցել 1926 թ. նրա՝ հայրենիք վերադառնալու հարցում, բ) Վենետիկում գտնվող Ավ. Իսահակյանը գործուն մասնակցություն է ցուցաբերել Դ. Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901-1918)» գրքի տպագրության հարցում:

Հայտնի է նաև, որ Երևանում գտնվելու ժամանակահատվածում Իսահակյանն ու Անանունը մշտապես շփվել են: Իսկ վերջինիս՝ աքսորում եղած ժամանակ մեծանուն բանաստեղծը հետաքրքրվել է նրանով:

Բանալի բառեր՝ Ավ. Իսահակյան, Դ. Անանուն, նամակներ, Ռ. Դարբինյան, Հովհ. Քաչազնունի, Պ. Մակինցյան, Վենետիկ:

О СВЯЗЯХ АВЕТИКА ИСААКЯНА И ДАВИДА АНАНУНА

Анушаван Закарян

Резюме

Известно, что выдающийся поэт, знаковая фигура армянской литературы Аветик Исаакян и один из крупнейших представителей армянской действительности первого тридцатилетия XX века – общественно-политический деятель, арменовед Давид Ананун познакомились в начале прошлого века в Баку. Д. Ананун в то время служил на нефтепромыслах братьев Туманян, где часто бывали многие писатели, в том числе Ав. Исаакян.

Из писем, опубликованных в XIV томе изданного в 2021 г. «Полного собрания сочинений» Ав. Исаакяна явствует, что Ав. Исаакян советовался с Д. Анануном в связи с вопросом своего возвращения с чужбины на Родину, и последний сыграл решающую роль в его возвращении в 1926 г. в Армению. Подтверждением дружеских связей стал факт деятельного участия Ав. Исаакяна (находившегося в то время в Венеции) в издании книги Анануна «Общественное развитие российских армян (1901-1918)». Их связь не прервалась и после временного возвращения Исаакяна в Армению, и даже в сложный для Анануна период: когда известный арменовед находился в ссылке, поэт интересовался его судьбой.

Ключевые слова – Ав. Исаакян, Д. Ананун, письма, Р. Дарбинян, Ов. Каджазнуни, П. Макинцян, Венеция.

ON THE TIES BETWEEN AVETIK ISAHAKYAN AND DAVIT ANANUN

Anushavan Zakaryan

Abstract

Until now, about the relations between Avetik Isahakyan and one of the greatest figures of the Armenian reality of the first 30 years of the XX century, public and political figure, Armenologist Davit Ananun was known that they met in Baku at the beginning of the century. D. Ananun was serving in the Tumanyan brothers' oil fields at that time, where a number of writers were frequent guests, among them Av. Isahakyan, too.

From the letters published in the 14th volume of Av. Isahakyan's "Complete Collection of Works" brought out in 2021 it turns out as follows: a) among many people Av. Isahakyan several times turned to D. Ananun for advice about the issue of returning to Armenia from abroad and the latter played a decisive role in his return to the homeland in 1926; b) Av. Isahakyan took an active part in the issue of publishing D. Ananun's book "Social Development of Russian-Armenians (1901-1918)". It is also known that during his stay in Yerevan, Isahakyan and Ananun were always in touch with each other. And while the latter was in exile, the great poet inquired about him.

Key words – Av. Isahakyan, D. Ananun, letters, R. Darbinyan, Hovh. Kajaznuni, P. Makintyan, Venice.